# ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՑԱՆԿԵՐ

## ՇԵՔՍՊԻՐՅԱՆ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ
## 1966

23—ապրիլի—Շեքսպիրի մահվան 350-ամյակին նվիրված երեկո՝ Երևանի պետական համալսարանի մեծ դահլիճում։ Բացման խոսք՝ Վ. Փափազյան։ Զեկուցող՝ Ռ. Զարյան։ Վերջում՝ Գ. Կոզինցևի «Համլետ» կինոնկարի ցուցադրումը։ Երեկոն կազմակերպել էին Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և կուլտուրական կապի հայկական ընկերությունը և պետական համալսարանը։

4—մայիսի—Շեքսպիրի մահվան 350-ամյակի առթիվ՝ ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի գիտական նստաշրջանը ակադեմիայի փոքր դահլիճում։ Բացման խոսք՝ Ռ. Զարյան։ Զեկուցեցին Վ. Առաքելյան՝ «Շեքսպիրյան թարգմանությունների լեզվական արվեստը», Մ. Նարյան՝ «Զարրհանալյանը Շեքսպիրի մասին», Խաչիկ Դաշտենց՝ «Շեքսպիրի հայերեն թարգմանությունները»։ Օրակարգից դուրս Ռ. Զարյանը հաղորդում արեց Երևանում կազմակերպված Շեքսպիրյան գրադարանի մասին։

15—16—հունիսի—Թբիլիսիի Ռուսթավելու անվան պետական ակադեմիական թատրոնի հյուրախաղերը Երևանի Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնում. ծրագրում «Արքա Լիր», թարգմ.—Ի. Ջելիձեի, բեմ. ռեժիսոր—Մ. Թումանիշվիլի, նկարիչ—Ն. Իգնատով, կոմպոզիտոր—Օ. Թաքթաքիշվիլի, դիրիժոր—Ի. Գոգինաշվիլի, խորմեյստեր—Ն. Մամացաշվիլի, ներկայացումը վարող ռեժիսոր—Ռ. Քափանաձե, թատրոնի գլխավոր ռեժիսոր—Ա. Չխարտիշվիլի։ Լիր Արքա—Ս. Զաքարիաձե, Ֆրանսիայի արքան—Մ. Թավաձե, Բուրգոնդի դուքսը—Ն. Մարգելաշվիլի, Կորնվելի դուքսը—Դ. Գարգանիձե, Օլբենի դուքսը—Բ. Կորախիձե, Քենտի կոմսը—Էր. Մանջգալաձե, Գլոստերի կոմսը—Գ. Գեգեչկորի, Էդգար—Է. Մագալաշվիլի, Էդմոնդ—Ռ. Չխիկվաձե, Կուրան—Ս. Ինձլի, Օսվալդ—Մ. Բարուկաշվիլի, բժիշկ—Գ. Ջիշինաձե, խեղկատակ—Գուր. Սագարաձե, Գոներիլ—Ս. Կանչելի, Ռեգան—Մ. Ջախավա, Կորդելիա—Բ. Միրիանաշվիլի, Էդմոնդի ծառան—Դ. Չխիկվաձե, Գլոստերի կոմսի ծառաները—Գ. Թալաքվաձե, Օթ. Լոմիձե։ Կորնվոլի սպասավորները—Ս. Լագիձե, Գ. Խարաբաձե, Գ. Մատարաձե, Գոներիլի ծառաները—Դ. Պապուաշվիլի, Մ. Լոմիձե, Ն. Գողերձիշվիլի, Դ. Մացաբերիձե, Գ. Բաքրաձե։ Սուրհանդակ—Դ. Մոնիավա։

18—նոյեմբերի—Մոսկվայում կայացավ ազգային լեզուներով կրկնօրինակվող և վերականգնվող ֆիլմերի համամիութենական սեմինար-խորհրդակցություն. ցուցադրվեց «Համլետը» հայերեն։ Թարգմ. Հ. Մասեհյան, Վ. Հովակիմյան, ռեժիսոր Ե. Մա-

*տուրյան, Լ. Գրիգորյան, հնչյունային օպերատոր Ճ. Գրիգորյան, տեքստը տեղա-գրող—Լ. Ներսիսյան։ Գլխավոր դերերում—Համլետ—Խ. Աբրահամյան, Կլավդիոս—Ա. Սարգսյան, Գերտրուդ—Մ. Սիմոնյան, Օֆելիա—Մ. Մուրադյան, Պոլոնիուս—Դ. Հարությունյան, Լաերտ—Լ. Առուշանյան։*

Նորա Էլբակյան